Քաղաքականության համառոտագիր

Աջակցություն ԵՄ-Հայաստան ՀԸԳՀ-ի կիրարկմանը՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները

Հիմնախնդրի նկարագրություն

Չնայած Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորություններին՝ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներն ու իրավունքները շարունակում են անբավարար չափով ընդգրկված լինել քաղաքականությունների մշակման, իրականացման և մոնիթորինգի գործընթացներում: Հաշմանդամության հետ կապված խնդիրները հաճախ դիտարկվում են առանձին՝ աղքատության կրճատման, զբաղվածության, մասնակցության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտներում ՀԸԳՀ-ի ավելի լայն բարեփոխումների մեջ սահմանափակ ինտեգրմամբ:

Հետազոտության նպատակ

Սույն քաղաքականության համառոտագիրը հիմնված է 2025 թվականի տարեսկզբին անցկացված համապարփակ մոնիթորինգային ուսումնասիրության վրա, որի շրջանակներում գնահատվել է Հայաստանի կողմից ՀԸԳՀ-ի 84-88-րդ հոդվածների կիրարկումը: Ուսումնասիրության նպատակն էր գնահատել, թե որքանով են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները ներառված ՀԸԳՀ-ին առնչվող բարեփոխումներում, և մշակել գործնական առաջարկություններ ավելի ներառական կիրարկման համար: Ուսումնասիրությունը հիմնված է իրավական և քաղաքական շրջանակների վերլուծության, կառավարությանն ուղված հարցումների և շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների վրա:

Հիմնական բացահայտումներ

- Հաշմանդամության խնդիրները հազվադեպ են ընդգրկվում ՀԸԳՀ-ին առնչվող բարեփոխումներում, բացառությամբ այն դեպքերի, երբ քաղաքականությունը հատուկ կենտրոնացած է հաշմանդամության վրա: Ընդհանուր բարեփոխումների մեծ մասում (օրինակ՝ զբաղվածության կամ աղքատության կրճատման ռազմավարություններ) բացակայում են ներառական մոտեցումները կամ հաշմանդամությանը վերաբերող հատուկ դրույթները:
- Հայաստանում չկա մեխանիզմ, որը կգնահատի՝ արդյոք ՀԸԳՀ-ից բխող բարեփոխումները համահունչ են Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային կամ հաշմանդամության վերաբերյալ ազգային օրենսդրությանը: Սա հանգեցնում է քաղաքականության անհետևողականության և իրականացման բացերի:

- Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ տվյալները սահմանափակ են և հատվածական: Գոյություն չունի հաշմանդամության հետ կապված տվյալների հավաքման, ապախոշորացման և օգտագործման համակարգված շրջանակ, որը կսպասարկեր ՀԸԳՀ-ի իրականացումը:
- Հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ներկայացնող կազմակերպությունները հետևողականորեն չեն ներառվում քաղաքականության վերաբերյալ քննարկումներում կամ ՀԸԳՀ-ի հետ կապված հարթակներում: Բարեփոխումների վերաբերյալ խորհրդակցությունները տեղի ունենալու դեպքում էլ՝ առաջարկությունները հաճախ չեն արտացոլվում վերջնական որոշումներում:

Առաջարկություններ

1. Ապահովել, որ ՀԸԳՀ-ի հետ կապված բոլոր բարեփոխումները (անկախ նրանից, թե որքանով են դրանք ուղղակիորեն առնչվում հաշմանդամությանը) ներառեն հաշմանդամություն ունեցող անձանց վրա ազդեցության գնահատումներ՝ թե՛ պլանավորման, թե՛ գնահատման փուլերում:
2. Ներդնել քաղաքականության մշտական վերանայման մեխանիզմ՝ ստուգելու ՀԸԳՀ-ից բխող օրենսդրական բարեփոխումների համատեղելիությունը ՄԱԿ-ի կոնվենցիայի չափանիշներին և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքին:
3. Ստեղծել ըստ հաշմանդամության տեսակի, սեռի, տարիքի և տարածաշրջանի ապախոշարացված տվյալների հավաքման և օգտագործման ազգային համակարգ՝ կիրառելով Վաշինգտոնի խմբի հարցեր և նմանատիպ այլ գործիքներ:
4. Ինստիտուցիոնալացնել հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների մասնակցությունը ՀԸԳՀ շրջանակում քաղաքականության մշակման, խորհրդակցությունների և մոնիթորինգի կառույցներում: Ներառել բազմազան խմբեր, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող փախստականները, երեխաները և հոգեսոցիալական հաշմանդամություն ունեցող անձինք:

Եզրակացություն

Հաշմանդամություն ունեցող անձանց ներառումը պետք է դառնա Հայաստանի կողմից ՀԸԳՀ-ի իրականացման միջոլորտային առաջնահերթություն: Առանց հստակ չափորոշիչների, ներառական գործընթացների և հուսալի տվյալների՝ բարեփոխումները կարող են խորացնել առկա անհավասարությունները: Այս առաջարկությունները նպատակ ունեն ապահովելու, որ ՀԸԳՀ-ն դառնա հավասարության և սոցիալական ներառման իրական շարժիչ ուժը Հայաստանում:

Հեղինակ՝ Մուշեղ Հովսեփյան | mushegh.hovsepian@gmail.com

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը՝ Մուշեղ Հովսեփյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: